ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1999 թվականի հունվարի 9-ի ՀՕ-47 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. Մինչև հանքի շահագործման սկիզբը կատարված մակաբացման աշխատանքների գծով ճանաչված ակտիվներն ամորտիզացվում են հաստատված օգտակար հանածոյի ընդհանուր պաշարի արդյունահանմանը համամասնորեն՝ ներառվելով արդյունահանվող օգտակար հանածոյի ինքնարժեքում: Հանքի շահագործումն սկսելուց հետո կատարված մակաբացման աշխատանքների գծով ծախսերը վերագրվում են մակաբացման աշխատանքների արդյունքում արդյունահանվող օգտակար հանածոյի ինքնարժեքին: Մակաբացման աշխատանքների գծով ծախսերի՝ արդյունահանվող օգտակար հանածոյի ինքնարժեքին վերագրելու կարգը սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 2. Օրենքի 32-րդ հոդվածում «հեռահաղորդակցության» բառից առաջ լրացնել «էլեկտրական էներգիայի արտադրության, էլեկտրական էներգիայի և բնական գազի հաղորդման, բաշխման և (կամ) մատակարարման և» բառերը:

Հոդված 3. Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) առաջին պարբերությունում «իրականացնողների» բառից հետո լրացնել «(բացառությամբ էլեկտրական էներգիայի արտադրության, էլեկտրական էներգիայի և

բնական գազի հաղորդման, բաշխման և (կամ) մատակարարման լիցենզավորված գործունեություն իրականացնողների)» բառերը, իսկ «10 տոկոսը» բառերից հետո՝ «, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության, էլեկտրական էներգիայի և բնական գազի հաղորդման, բաշխման և (կամ) մատակարարման լիցենզավորված գործունեություն իրականացնողների համար՝ ներդրման ընդհանուր արժեքի 20 տոկոսը» բառերը.

2) չորրորդ պարբերությունում «հիմնական միջոցների ձեռքբերմանը (կառուցմանը)» բառերը փոխարինել «հիմնական միջոցների, հողամասերի և (կամ) կենսաբանական ակտիվների ձեռքբերմանը (կառուցմանը, փոխակերպմանը)» բառերով:

Հոդված 4. Օրենքի 45.1-ին հոդվածում՝

1) 2-րդ մասի առաջին պարբերությունում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Շահութահարկի դրույքաչափի փոփոխություն նախատեսող օրենքն ուժի մեջ մտնելու տարվա ընթացքում սույն մասով սահմանված կանխավճարների մուծումները համամասնորեն բարձրացվում կամ նվազեցվում են:».

2) 8-րդ մասում «վերադարձման ենթակա չեն» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 8.1-ին մասով սահմանված դեպքի» բառերը.

3) 8-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին մաս.

«8.1. Ընթացիկ տարվա հունվարի 1-ից մինչև հարկային մարմնի փաստացի շահութահարկի գումարը հայտնի դառնալու (շահութահարկի հաշվարկը ներկայացնելու) օրն ընկած ժամանակահատվածի համար հաշվարկված տույժերը վերահաշվարկվում են և ենթակա են վերադարձման «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի համաձայն:»:

Հոդված 5.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված՝ էլեկտրական էներգիայի արտադրության, էլեկտրական էներգիայի և բնական գազի հաղորդման, բաշխման և (կամ) մատակարարման լիցենզավորված գործունեություն իրականացնողների համար ներդրման ընդհանուր արժեքի 20 տոկոսը չգերազանցելու դրույթը տարածվում է նաև մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Օրենքի 38-րդ հոդվածով սահմանված արտոնությունից օգտվող կազմակերպությունների վրա:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ **Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**